

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՍՓՈՓԱԳԻՐ	5
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	7
III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	8
IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ	25
VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» թիվ 151-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
3. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք,
4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք,
5. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
7. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
8. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,
9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն

¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2025 թվականի հունվարի 9-ից 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը²	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

I.ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված էական փաստերն են.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի ավարտի դրությամբ դեռևս ներդրված չէ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (այսուհետ՝ Ստանդարտ) պահանջներին և հաշվային պլանին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագիրը՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգը:

Նախարարությունում 2024 թվականին ներքին աուդիտի գործառույթ չի իրականացվել:

Հաշվետու տարվա բյուջեով նախատեսված ընթացիկ դրամաշնորհը բյուջետային ծախսերի դասակարգման համապատասխան հոդվածով չնախատեսելու (չպլանավորելու), տարվա ընթացքում հատկացումները նշված ոչ համապատասխան հոդվածով կատարելու, հաշվառելու և տարեկան հաշվետվությամբ արտացոլելու արդյունքում բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունը խեղաթյուրվել է 2,931,100.50 հազ. դրամի (ընդհանուր հատկացումների շուրջ 3 %-ի) չափով:

Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման նպատակով հատկացված հեղուկ վառելիքն ամբողջությամբ, տարեվերջի դրությամբ չօգտագործված մնացորդները ներառյալ, ծախսագրելու արդյունքում հաշվետվության «Տրանսպորտային նյութեր» հոդվածի փաստացի (իրական) ծախսերի ցուցանիշը խեղաթյուրված է 112,765.82 հազ. դրամ գումարի չափով:³

³ Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրումները ներառված չեն ընթացիկ եզրակացությունների «Խեղաթյուրումներ» բաժնում, քանի որ դրանք օրենսդրության համաձայն ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (24-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

Հաշվետու ժամանակաշրջանի բյուջեի կատարման հաշվետվության «Տրանսպորտային նյութեր» հոդվածով արտացոլված ընդամենը՝ 4,100,735.40 հազ. դրամ փաստացի (իրական) ծախսերի խեղաթյուրման ռիսկն էական է, քանի որ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների՝ 1,842,303.15 հազ. դրամ ընդանուր գումարով հեղուկ վառելիքի ծախսագրումներն հիմնավորված չեն. դրանք կատարվել են առանց իրական (փաստացի) ծախսն արձանագրող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ⁴

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության նպատակով Նախարարությունից ստացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Արձանագրված անհամապատասխանությունների մանրամասները և դրա արդյունքում ֆինանսական հաշվետվություններում առանձին ցուցանիշների խեղաթյուրումները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության համապատասխանաբար IV-րդ և V-րդ բաժիններում: Արձանագրված 3,192,350.32 հազ. դրամ ընդհանուր գումարով խեղաթյուրումներից 3,079,584.50 հազ.դրամը կարող է ազդեցություն ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա:

Հետհսկողական գործընթացի շրջանակում Նախարարության կողմից ներկայացվել է «ՆԳՆ 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագիր» և տեղեկատվություն՝ անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման ընթացքի վերաբերյալ: Մանրամասները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության [Հավելվածում](#):

⁴ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարության, որպես ծրագրերի կատարող, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 91,130,462.40 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 100,957,599.70 հազ.դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 98,085,571.64 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 97,214,147.29 հազար դրամ: Ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 97.2%:

Ըստ բյուջետային ծրագրերի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման ցուցանիշները

Աղյուսակ 1
(Հազար դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակահատվ ածի պլան	Հաշվետու ժամանակահատվ ածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴՀԱՄԵՆԸ		91,130,462.40	100,957,599.70	98,085,571.64	97,214,147.29
1070	Աջակցություն փախստականների ինտեգրմանը				355,180.32 ⁵
1090	Փրկարարական ծառայություններ	13,461,356.60	13,157,797.40	13,006,240.07	12,994,176.89
1101	ՆԳՆ կրթական ծառայություններ	1,571,659.70	933,076.10	754,022.10	571,035.80

⁵ Ցուցանիշի առկայությունը պայմանավորված է նախորդ ժամանակաշրջանում հատկացված ֆինանսական միջոցները (ճանաչվել է դեբիտորական պարտք) հաշվետու տարում օգտագործելու և սահմանված կարգով փաստացի ծախս ճանաչելու հանգամանքով:

1234	Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	76,097,446.10	86,866,726.20	84,325,309.47	83,293,754.28
------	--	---------------	---------------	---------------	---------------

Նախարարության կողմից վերահսկվող մուտքեր (եկամուտներ)

Նախարարության կողմից 2024 թվականի ընթացքում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողականի մասին հաշվետվության համաձայն՝ փաստացի մուտքերի ցուցանիշը կազմել է 37,950,868.30 հազ. դրամ, որը ծրագրային 36,824,415.50 հազ. դրամ ցուցանիշը գերազանցում է 1,126,452.80 հազ. դրամով կամ 3.1 %-ով:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի մուտքերի ցուցանիշները ներկայացվում են Աղյուսակ 2-ում:

2024 թվականի ընթացքում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

Աղյուսակ 2
(Հազար դրամ)

Բյուջետային եկամուտների դասակարգման տարրերի անվանումները	2024թ տարեկան		Շեղում (կատարողական-պլան)	
	Ծրագրային ցուցանիշներ	Ստացված եկամուտներ,	Գումարով	%-ով
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	10,347,140.90	10,222,577.00	124,563.90	1,2%
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	26,477,274.60	27,728,291.30	1,251,016.70	4.7%
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	36,824,415.50	37,950,868.30	1,126,452.80	3,1%

IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման «463900՝ Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի Ոչայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին՝ 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվող ընթացիկ դրամաշնորհների գծով ծախսերի դասակարգման համար նախատեսված է «463700՝ Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Նախարարության և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) միջև 2024 թվականին կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիրը՝ գումարով 3,210,000.00 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 2,931,100.5 հազ. դրամ:

Դրամաշնորհը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «463900՝ Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «463700՝ Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի փոխարեն:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է և 2025 թվականին կատարվել է հոդվածային վերաբաշխում:

4.2 Տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի արձանագրումը

Առկա է անհամապատասխանություն ՈՀանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին՝ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի նկատմամբ՝ այն է՝ ՈՀաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» թիվ 142-Ա հրամանի հավելվածի 7.7-րդ կետով սահմանվել է, որ մարդատար ավտոմեքենայի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի (այսուհետ՝ ավտոմեքենայի) վառելիքի (բենզին, դիզելային վառելիք, հեղուկ գազ) ծախսումը փաստաթղթավորվում է «Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկով»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի վերաբերյալ սկզբնական հաշվառման փաստաթղթեր՝ երթուղային թերթիկներ չեն լրացվել, բացառությամբ պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների: Ամսվա կտրվածքով վառելիքի ծախսը և կատարված վազքի տվյալները ներկայացվել են հաշվետվությամբ՝ ներառելով ծառայության տեսակը, ամսվա համար ստացված վառելիքի քանակը, պետ. համարանիշը և ըստ աշխատանքային օրերի ընդհանուր թվի կատարված վազքը: Ըստ հաշվետվությունների, 2024 թվականի ընթացքում պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 1,842,303.15 հազ. դրամ:

Առկա է Նախարարության 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի բյուջետային ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության «426400 Տրանսպորտային նյութեր» հոդվածով արտացոլված 4,100,735.4 հազ. դրամ փաստացի (իրական) ծախսերի էական խեղաթյուրման ռիսկ, քանի որ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների՝ 1,842,303.15 հազ. դրամ ընդհանուր գումարով հեղուկ վառելիքի ծախսագրումները հիմնավորված չեն. դրանք կատարվել և հաշվետվությամբ արտացոլվել են առանց իրական (փաստացի) ծախսն արձանագրող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի:

Նախարարության բացատրությունը

Կազմվել են պարեկային և փրկարար ծառայությունների տրանսպորտային միջոցների ուղեգրերի ձևաչափեր:

Պարեկային ծառայության ուղեգիրը բաղկացած է 2 սյունակից (1 օրվա համար), քանի որ օրվա ընթացքում աշխատում է 2 հերթափոխով (պարեկային ծառայության 2 տարբեր աշխատակից):

Քանի որ պարեկային ծառայության տրանսպորտային միջոցները համալրված են պահեստային ընթացքի ցուցիչով, ուստի ուղեգրի մեջ ավելացել է առանձին սյունակ (բաքում եղած վառելիքի մոտավոր քանակը (լիտր) պահեստային ընթ. կմ-ով):

Փրկարար ծառայության ուղեգրերի դարձերեսին ավելացել է հատկացված բենզինի ծախսի համար նախատեսված սյունակ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Օրենսդրության համաձայն, կատարված ցանկացած ծախս պետք է հիմնավորվի սահմանված կարգով, ժամկետում և պարտադիր վավերապայմաններով կազմված սկզբնական հաշվառման փաստաթղթերով: Տվյալ դեպքում, տրանսպորտային միջոցների հեղուկ վառելիքի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված երթուղային թերթիկներն են:

4.3 Տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչումը

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտով» սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջների նկատմամբ, համաձայն որի ֆինանսական հաշվետվությունում ծախսերը պետք է ճանաչվեն, երբ առաջացել է ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի նվազում՝ կապված ակտիվի նվազման կամ պարտավորության աճի հետ, որը կարող է արժանահավատորեն չափվել: Չափումը այն դրամային գումարի որոշման գործընթացն է, որով տվյալ դեպքում ծախսերը ճանաչվում և գրանցվում են ֆինանսական հաշվետվություններում:

1. Նախարարության վառելիքաքսայուղերի 2024 թվականի տարեկան ծախսի հաշվետվությունների համաձայն, Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով ելքագրվել և այդ ծառայություններին է հատկացվել 1,845,990.22 հազ. դրամ ընդհանուր գումարով հեղուկ վառելիք. 1,638,165 լիտր, 802,700.85 հազ. դրամ գումարով պրեմիում, 2,260,005 լիտր, 1,039,602.30 հազ. դրամ գումարով ռեգուլյար տեսակների բենզին և 7,960 լիտր, 3,687.07 հազ. դրամ գումարով դիզելային վառելիք: Ելքագրված հեղուկ վառելիքն ամբողջությամբ ծախսագրվել է և Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվությամբ, նույն՝ 1,845,990.22 հազ. դրամ գումարով արտացոլվել որպես փաստացի ծախս: Սակայն, ըստ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների 2024 թվականի վառելիքի ծախսի հաշվետվությունների՝ պրեմիում տեսակի բենզինի փաստացի ծախսը կազմել է 1,615,100 լիտր՝ 791,399.00 հազ. դրամ գումարով, կամ ելքագրված և ծախս ճանաչված բենզինից 23,065 լիտրով, 11,301.85 հազ. դրամով պակաս, ռեգուլյար տեսակի բենզինի փաստացի ծախսը կազմել է 2,238,115 լիտր՝ 1,029,532.90 հազ. դրամ գումարով, կամ ելքագրված և ծախս ճանաչված բենզինից 21,890 լիտրով, 10,069.40 հազ. դրամով պակաս և դիզելային վառելիքի ծախսը՝ 7,960 լիտր՝ 3,687.07 հազ. դրամ գումարով, կամ ելքագրված և ծախս ճանաչված դիզելային

վառելիքից 1,540 լիտրով, 713.33 հազ. դրամով պակաս: Վերոգրյալը հիմնավորվել է նաև հեղուկ վառելիքի նույն ժամանակաշրջանի շարժով (մուտք, ելք) և հաշվետու տարվա սկզբի և վերջի դրությամբ դրանց, համապատասխանաբար, ըստ տեսակների մնացորդներով:

2. Փրկարար ծառայությանը տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով 1234-11001 ծրագրային միջոցառման⁶ «426400՝ Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով տրամադրվել է 150,000 լիտր՝ 69,051.00 հազ. դրամ գումարով ռեգուլյար տեսակի բենզին և 1090-11001 ծրագրային միջոցառման⁷ շրջանակներում՝ 100,000 լիտր՝ 46,123.00 հազ. դրամ գումարով դիզելային վառելիք: Ստացված վառելիքից Փրկարար ծառայության մարզային ստորաբաժանումներին նույեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում բաշխվել է 26,875 լիտր, 12,371.64 հազ. դրամ գումարով բենզին և 26,280 լիտր՝ 12,121.12 հազ. դրամ գումարով դիզելային վառելիք:

3. Հաշվեքննությամբ պարզվել է, որ Փրկարար ծառայությանը տրամադրված 115,174.0 հազ. դրամ ընդհանուր գումարով հեղուկ վառելիքն ամբողջությամբ ծախսագրվել է և Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվությամբ արտացոլվել որպես փաստացի ծախս: Արդյունքում հաշվետվության «426400՝ Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով հաշվետու տարվա հեղուկ վառելիքի փաստացի ծախսն ավել է ցույց տրվել 90,681.24 հազ. դրամի չափով: Միաժամանակ, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ռեգուլյար տեսակի բենզինի և դիզելային վառելիքի մնացորդները, նույն համամասնությամբ, պակաս է ցույց տրվել, համապատասխանաբար՝ 123,125 և 73,720 լիտրերով:

Նախարարության բացատրությունը

գլխավոր քարտուղարի կողմից տրվել է հանձնարարական ՀՀ ՆԳՆ ՏՎ, ՊԾ-ին, Փրկարար ծառայությանը հատկացված հեղուկ վառելիքի փաստացի ծախսագրման գործընթացը իրականացնել՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների

⁶ 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառում

⁷ 1090-11001 «Փրկարար ծառայություններ» ծրագրային միջոցառում

նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտով» սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջները:

4.4 Տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսն արձանագրող սկզբնական հաշվապահական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանների պահպանումը

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված պահանջի նկատմամբ, այն է. «Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները (ռեկվիզիտները)՝ ... գործառնության (այլ դեպքի կամ իրադարձության) չափման միավորները՝ դրամական և (կամ) բնաիրային արտահայտությամբ»:

ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» թիվ 37-Ն հրամանի № 1 հավելվածի 48-րդ կետով՝ ձև ՕԽ-6-ով սահմանվել է, որ ավտոմեքենայի երթուղային թերթիկների լրացման պարտադիր վավերապայման է հանդիսանում ավտոմեքենայի «Վազքի ցուցիչի ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) սկզբում (կմ)», ինչպես նաև «Վազքի ցուցիչի ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) վերջում (կմ)»:

Փրկարար ծառայությանը 31.12.2024 թվականի դրությամբ ամրակցված է եղել Նախարարության հաշվեկշռում հաշվառված 471 տրանսպորտային միջոց:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Փրկար ծառայության 9 ավտոմեքենաների համար վառելիքի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերում՝ երթուղային թերթիկներում, բացակայում են օրական կամ ամսական վազքի ցուցմունքները: Նշված ավտոմեքենաների շահագործման համար 2024 թվականի

ընթացքում ծախսվել է 28,326 լիտր՝ 13,030.00 հազ. դրամ գումարով ռեգուլյար տեսակի բենզին:

Առանց այդ՝ ֆիզիկական (բնաիրային) մեծություններով չափվող վազքի ցուցիչի ցուցմունքների լրացման, չի ապահովում ավտոտրանսպորտային միջոցների հեղուկ վառելիքի ծախսի հիմնավորվածությունը:

Առկա է Նախարարության 1090-11001 «Փրկարար ծառայություններ» ծրագրային միջոցառման «426400 Տրանսպորտային նյութեր» հոդվածով փաստացի (իրական) ծախսերի խեղաթյուրման ռիսկ, քանի որ վերոնշյալ տրանսպորտային միջոցների՝ 13,030.00 հազ. դրամ ընդհանուր գումարով հեղուկ վառելիքի ծախսագրումները հիմնավորված չեն. դրանք կատարվել և հաշվետվությամբ արտացոլվել են առանց իրական (փաստացի) ծախսն արձանագրող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի:

Նախարարության բացատրությունը

ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի կողմից տրվել է հանձնարարական ապահովել ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության ավտոմեքենաների համար վառելիքի ծախսի օրական կամ ամսական վազքի ցուցմունքները հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերում՝ երթուղային թերթիկներում, ճշգրիտ արտացոլելու ուղղությամբ:

4.5 Թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԱՐԲ» գնման պայմանագրով կատարված ծախսեր (Էլեկտրական սարքերի նորոգման ու պահպանման ծառայություններ)

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի Ունյաստանի Հանրապետության բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին՝ 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի համար նախատեսված է ՈւՊ425200՝ Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից կնքվել է թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԱՐՔ» ծածկագրով գնման պայմանագիրը, գումարով՝ 13,300.00 հազ.դրամ: Պայմանագրով նախատեսվել և փաստացի ձեռք են բերվել Էլեկտրական սարքերի նորոգման ու պահպանման ծառայություններ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման ՈԿ423200՝ Համակարգչային ծառայություններ՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ ՈԿ425200՝ Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 13,157.00 հազ.դրամ:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.5.1. Գնումների միասնական անվանացանկին գնման առարկայի համապատասխանությունը

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման №3 հավելվածի 2-րդ կետով սահմանված պահանջի նկատմամբ, այն է՝ Ո. Գնումների պլանի՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան:

Նախարարության կողմից թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԱՐՔ» ծածկագրով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ՝ «Սարքավորումների ենթադրյալ սպասարկման և վերանորոգման ծառայություն» ձեռքբերելու նպատակով: Ըստ հրավերի՝ գնման առարկան խմբավորված է մեկ չափաբաժնում գնումների միասնական անվանացանկի ՕԾրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ գնումների միասնական անվանացանկի 72261100 կոդով, որը չի համապատասխանում այն գնման առարկային, որի համար հայտարարվել է գնման ընթացակարգը: Ըստ տեխնիկական բնութագրի ձեռք են բերվել սարքավորումների

սպասարկման և վերանորոգման ծառայություններ, որոնց համար ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի 390-Ն որոշման № 3 հավելվածի 2-րդ կետով սահմանված է՝ Ու.Գնումների պլանի՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան՝ և հավելված 4-ի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված է՝ Օ ...չորրորդ մակարդակը՝ դասակարգիչը, ցույց է տալիս անվանման մեջ ներառվող՝ վերջնական սպառման ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը: Ըստ տեխնիկական բնութագրի Նախարարության կողմից ձեռք են բերվել սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ, որոնց համար նախատեսված է գնումների միասնական անվանացանկի ՕԷԼԵԿՏՐԱԿԱՆ սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություն՝ 50531200 կոդը:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.5.2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը սահմանված ժամկետում հրապարակելը

Առկա է անհամապատասխանություն Ու.Գնումների մասին՝ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի նկատմամբ, այն է՝ «...Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը»:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն, որը «gnumner.am» տեղեկագրում հրապարակվել է հուլիսի 12-ին, թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾԶԲ-ՄԱՐԲ» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և հայտերի գնահատման նիստը տեղի է ունեցել 2024 թվականի հուլիսի 9-ին: Ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որը ճանաչվել է հաղթող: Հետևաբար անգործության ժամկետը կիրառելի չի եղել:

Նախարարության կողմից «պայմանագիր կնքելու մասին որոշման» հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում հաղթող մասնակցի ճանաչումից 5 օր հետո՝ ընդ որում այլ ծածկագրով ընթացակարգի տակ: Այսպիսով, ուշացման արդյունքում Նախարարության և մասնակցի՝ «Տոպագ-95» ՍՊԸ-ի միջև պայմանագիրը կնքվել է 2024 թվականի հուլիսի 22-ին: «Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը» ևս հրապարակված է այլ ծածկագրով ընթացակարգում:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.6 Թիվ «ՀՀ Ո ԳՀԾԶԲ-2023/2025» գնման պայմանագրով կատարված ծախսերի դասակարգումը

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի Ուշադրության Հանրապետության բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին՝ 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի համար նախատեսված է Ո425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾԶԲ-2023/2025» ծածկագրով գնման պայմանագիրը՝ գումարով 219,000.00 հազ.դրամ: Պայմանագրով նախատեսվել և փաստացի ձեռք են բերվել տարբեր սարքերի և սարքավորումների նորոգման ու պահպանման ծառայություններ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման Ո423200՝ Համակարգչային ծառայություններ՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ Ո425200՝ Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ հոդվածի

փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 130,427.00 հազ.դրամ:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.7 1234-11005 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում, տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» ծրագրային միջոցառման «421600՝ Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի Ուշայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին՝ 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված է ՈւՅԳՆ ԳՀԾԶԲ-2024ԶԵԲԹ/ՃՈ» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 15-ին «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 4,900.00 հազ. դրամի թիվ «ՆԳՆ ԳՀԾԶԲ-2024ԶԵԲԹ/ՃՈ» ծածկագրով գնման պայմանագիրը:

Նախարարության 2024 թվականի կարիքների համար Երևանի հաշվառման-քննական բաժնի և Կոտայքի հաշվառման-քննական բաժնի տրանսպորտային միջոցների գրանցման-հաշվառման և վարորդական վկայականների հատկացման գործընթացների ժամանակ հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ձեռքբերման համար կազմակերպվել է թիվ «ՆԳՆ ԳՀԾԶԲ-2024ԶԵԲԹ/ՃՈ» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 15-ին «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 4,900.00 հազ. դրամի թիվ «ՆԳՆ ԳՀԾԶԲ-2024ԶԵԲԹ/ՃՈ» ծածկագրով գնման պայմանագիրը:

Նախարարության կողմից հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ծախսերը կատարվել են 0421600՝ Գույքի և սարքավորումների վարձակալություն՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ 0423900՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 4,900.00 հազ.դրամ:

Նախարարության բացատրությունը

Ձեռք բերված ծառայությունը ներառում է մոնիտորների, հերթի կառավարման սարքավորումների թե՛ վարձակալության և թե՛ դրանց սպասարկման ձեռքբերում, ուստի այն ձեռք է բերվել 0421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն՝ հոդվածով:

2025թ. դեռևս գնման գործընթաց չի սկսվել և նախատեսվում է իրականացնել գնման առարկայի փոփոխություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.8 Գնման ընթացակարգեր

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման № 1 հավելվածի 23-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների նկատմամբ, համաձայն որի «....եթե գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերում ներառված՝ վերջնական սպառման ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, ապա գնման առարկայի ձեռքբերումը կարող է իրականացվել գնանշման հարցման ձևով՝ պայմանով, որ այն չպետք է ներառված լինի էլեկտրոնային աճուրդով կամ կենտրոնացված եղանակով կամ փակ պարբերական մրցույթով իրականացվող գնումների ցուցակում»:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2023/2025» և «ՀՀ ՆԳՆ ՈԶ ԳՀԾՁԲ-24/6/Բ/4/ԱԾ» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնման գները, գերազանցելով գնումների բազային միավորի ութսունապատիկը, գնումն իրականացվել է գնանշման հարցման ձևով, այն դեպքում երբ նրանք ներառված են եղել էլեկտրոնային աճուրդի եղանակով իրականացվող գնումների ցանկում:

Նախարարության բացատրությունը

Թեև 60171100 ԳՄԱ կոդը նշված է էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող գնման առարկաների թվային ծածկագրերի անվանացանկում, սակայն գնման ընթացակարգերը հիմնականում իրականացվել են «Գնանշման հարցում» գնման ձևով, քանի որ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում, ելնելով ծառայության առանձնահատկություններից, նշված է եղել տրանսպորտային միջոցների վարձակալության միավոր գների հանրագումարը, որը հաղիսացել է մասնակցի գնային առաջարկի համեմատական, ըստ որի ընտրվել է նվազագույն գին առաջարկած մասնակիցը, իսկ պայմանագիրը կնքվել է ծառայության համար նախատեսված պայմանագրային առավելագույն գումարի չափով: «Էլեկտրոնային աճուրդ» գնման ձևով գնման ընթացակարգ իրականացնելու դեպքում սույն ծառայությունը ձեռք բերելու համար հայտարարված ընթացակարգում համակարգը ավտոմատացված կերպով ընտրում է նվազագույն գնային առաջարկ կատարած մասնակցին, իսկ որպես պայմանագրային առավելագույն գումար՝ ավտոմատ արտահանված նշվում է մասնակցի գնային առաջարկը, որը տվյալ դեպքում միավոր գների հանրագումարն է:

Ներկայումս կատարվել են համապատասխան շտկումներ, որոնց արդյունքում հնարավոր է դարձել գնումն իրականացնել էլեկտրոնային աճուրդով:

Ընդունվել է:

Ընթացակարգը հայտարարվել է 2023, 2024, 2025 թվականի կարիքների համար: 14.04.2023 թվականին կնքվել է պայմանագիր, 2023 թվականի կարիքների համար հատկացվել են 73 000 000 դրամի ֆինանսական միջոցներ, որը առանձին վերցրած չի գերազանցում բազային միավորի ութսունապատիկը, ուստի, հայտարարվել է գնանշման հարցում գնման ձևը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲՄ և ԳՀ գնման

ձևերը միմյանցից տարբերվում են հայտերի ներկայացման վերջնաժամկետով՝ այսինքն՝ ԳՀ-ն 7-15 օրացուցային օր է, իսկ ԲՄ-ն՝ առնվազն 30 օրացուցային օր, ընթացակարգում պահպանվել են մյուս օրենքով սահմանված կետերը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.9 Գնման պայմանագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ հայտարարությունների հրապարակումը

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման № 1 հավելվածի 55-րդ կետով սահմանված պահանջների նկատմամբ, համաձայն որի «...Եթե պետության կարիքների համար կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա այդ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում»:

«ՀՀ Ո ԳՀԾԶԲ-2023/2025» և «ՀՀ ՆԳՆ ՈԶ ԳՀԾԶԲ-24/6/Բ/4/ԱԾ» ծածկագրերով գնման պայմանագրերի շրջանակներում կնքվել են պայմանագրերի փոփոխության վերաբերյալ 3-ական համաձայնագիր: Փոփոխությունների վերաբերյալ տեղեկագրում հրապարակվել են յուրաքանչյուրի վերաբերյալ մեկական հայտարարություն:

Նախարարության բացատրությունը

Ընդունվել է: Քայլեր կձեռնարկվեն հետագայում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին և պատշաճ հրապարակման համար:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ներկայումս պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման հետ կապված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

4.10 Ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 7-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում ոստիկանության ծառայության, ոստիկանությունում ծառայության, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամ 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների նկատմամբ, այն է՝ «.....նշված մարմինների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշմամբ սահմանված ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգը.»:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի ավարտի դրությամբ ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգ հաստատված չէ:

Նախարարության բացատրությունը

Նախատեսվում է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 7-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում ոստիկանության ծառայության, ոստիկանությունում ծառայության, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

- 5.1. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման «463900՝ Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն ընթացիկ եզրակացության IV-րդ բաժնի [4.1.-րդ կետում](#) արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ծախսերի կատարման հաշվետվությունում «463900՝ Այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «463700՝ Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 2,931,100.50 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

- 5.2. Թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԱՐՔ» գնման պայմանագրով կատարված ծախսեր /Էլեկտրական սարքերի նորոգման ու պահպանման ծառայություններ/

Սույն ընթացիկ եզրակացության IV-րդ բաժնի [4.5.-րդ կետում](#) արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ծախսերի կատարման հաշվետվությունում «423200՝ Համակարգչային ծառայություններ» և «425200՝ Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 13,157.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

- 5.3. Թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2023/2025» գնման պայմանագրով կատարված ծախսեր

Սույն ընթացիկ եզրակացության IV-րդ բաժնի [4.6.-րդ կետում](#) արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ծախսերի կատարման հաշվետվությունում «423200՝ Համակարգչային ծառայություններ» և «425200՝ Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 130,427.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

5.4. 1234-11005 ծրագրային միջոցառումների «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն ընթացիկ եզրակացության IV-րդ բաժնի [4.7.-րդ կետում](#) արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ծախսերի կատարման հաշվետվությունում «421600՝ Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900՝ Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 4,900.00 հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:

VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարությանը.

1. Միջոցներ ձեռնարկել^{1.1} Ապրանքների (պաշարների) փաստացի ծախսը սկզբնական հաշվառման փաստաթղթերի, այդ թվում ավտոտրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը՝ երթուղային թերթիկների հիման վրա ձևակերպելու և ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների հիմնավորվածությունն ապահովելու համար:
- 1.2 Բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման նորմատիվային կարգավորումներով⁸ սահմանված հոդվածների հաշվառելու համար:
- 1.3 Գնումների պատասխանատու ստորաբաժանումների՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձանց գնման առարկան (ները) բնութագրելու մասնագիտական կարողությունները բարձրացնելու և գնման գործընթացը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջն⁹ ապահովելու նպատակով:
- 1.4 Գնման պայմանագրերի կատարման փաստաթղթերը, ներառյալ հանձնման-ընդունման արձանագրությունները և դրանք հիմնավորող կատարողական այլ փաստաթղթերը, գնումների էլեկտրոնային համակարգում (armeps.am) հրապարակելու ուղղությամբ:
- 1.5 Հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրի՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրումը հնարավոր սեղմ ժամկետներում ավարտին հասցնելու ուղղությամբ:
- 1.6 Նախարարության ներքին աուդիտի համակարգի առկայությունն ապահովելու ուղղությամբ:

⁸ Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի հանրապետության բյուջետային դասակարգումները եվ դրանց կիրառման կարգը հաստատելու մասին» N 5-Ն հրամանով:

⁹ Սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 13-րդ կետով:

2. Սույն ընթացիկ եզրակացությունում բերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և/կամ այլ փաստերով ներկայացված խնդիրների վերացման/շտկման նպատակով մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու պաշտոնատար անձ և միջոցառման կատարման իրատեսական ժամանակացույց՝ պատճենը ներկայացնելով Հաշվեքննիչ պալատ:

ՀՀ ֆինանսների նախարարությանը.

Բյուջետային ծախսերի՝ տնտեսագիտական դասակարգման նորմատիվային կարգավորումներով սահմանված պահանջներից շեղման ռիսկը կանխարգելելու նպատակով,

- լրամշակել ՖՆ կողմից իրականացվող՝ բյուջեներից կատարվող վճարումների նկատմամբ նախնական հսկողության ինքնաշխատ համակարգը, նախատեսելով ծախսերի շահառուների կազմակերպարավական¹⁰ տեսակից կախված, դրամաշնորհների հոդվածների համապատասխանության գնահատում:
- քննարկել նաև այլ ծախսերի դասակարգումը տնտեսական բովանդակության համապատասխանության գնահատման համար նախնական հսկողության ինքնաշխատ համակարգի կատարելագործման հնարավորությունները:

Գեղամ Հովեյան

Հաշվեքննիչ պալատի անդամ

Ստորագրություն

«29» Ապրիլի 2025 թվական

Հաշվեքննիչ պալատ

Մ.Բաղդասյան 19, ք.Երևան

Հայաստանի Հանրապետություն

¹⁰ 4.1 կետով արձանագրված անհամապատասխանություն.